

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տ.գ.թ.

Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարան, դոցենտ

Էլ. հասցե՝ g.harutyunyan7@gmail.com

DOI: 10.56925/2953-7894-2022.5-64

**ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ
(ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Հիմնաբառեր՝ երկրաշարժ, ապահովագրություն, ռիսկեր, նվազեցում, փոխհատուցում, իրավական համակարգ, վերաապահովագրություն, պայմանագիր

Բնական աղետները նյութական և մարդկային խոշոր վնասներ են պատճառում հասարակությանը: Նման աղետների շարքում կարելի է առանձնացնել երկրաշարժերը, ջրհեղեղները, սողանքները, փոթորիկները և այլն: Այն դեպքում, երբ պետությունը գտնվում է սեյսմոակտիվ գոտում, անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան հնարավորինս նվազեցնել պատճառված վնասները: Հայաստանի Հանրապետությունում երկրաշարժերը կարող են լուրջ վնասների և ավերածությունների պատճառ դառնալ:

Հիմք ընդունելով Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմած քարտեզի տվյալները՝ կնկատենք, որ ՀՀ-ում սեյսմոակտիվության մակարդակը բավականին բարձր

է, իսկ սեյսմիկ ռիսկը բնակչության քանակի ավելացմանը գուգահեռ տարիների ընթացքում աճում է: ¹ Դիտարկելով վիճակագրական տվյալները՝ տեսնում ենք, որ Հայաստանում տարեկան տեղի է ունենում միջին հաշվով 300-500 երկրաշարժ, ներառյալ՝ հետցնցումները. բնակչության մոտ 5-7 տոկոսը զգում է դրանք: Տեղի ունեցած երկրաշարժերի քանակով Հայաստանի տարածքի ամենաակտիվ սեյսմիկ գոտին Ջավախքի ընդարձակման գոտին է: Այդտեղ տեղի ունեցող երկրաշարժերի ուժգնությունը հիմնականում կազմում է մինչև 4 բալ: ² Տեղի ունեցող երկրաշարժերի հետևանքները կարող են ավերիչ լինել և մեծ վնասներ պատճառել: Միայն Սպիտակի երկրաշարժից զոհվել է 25,000 մարդ, աղետյալների թիվը կազմել է 1 մլն մարդ, անօթևանների թիվը՝ 514,000 մարդ: Նյութական ուղղակի կորուստները կազմել են 14 մլրդ ԱՄՆ դոլար: ³ Նման վնասների առաջացման պարագայում հրատապ անհրաժեշտություն է առաջանում օժանդակել բնակչությանը կորուստների փոխհատուցման տեսանկյունից: Սակայն ՀՀ-ում վնասների մեղմման համակարգը բավական թույլ է զարգացած: Ձեռնարկված չեն ո՛չ համապատասխան ռազմավարական միջոցառումներ՝ վնասները կանխարգելելու

¹ *Սպիտակի 1988թ. երկրաշարժը լուսանկարներով, փաստերով և մեկնաբանություններով*: Հայերեն-անգլերեն / Նազարեթյան Ս.Ն., Երևան, «Գիտություն», 2018, էջ 6-7, <http://www.mes.am/files/docs/3199.pdf>

² ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Նորություններ, Պաշտոնական <http://mes.am/hy/news/item/2021/02/17/2300/>

³ *Սպիտակի 1988թ. երկրաշարժը լուսանկարներով...*, նշվ. աշխ., էջ 6-7, <http://www.mes.am/files/docs/3199.pdf>

և ո՛չ էլ իրավական միջոցառումներ այն դեպքում, երբ հարկավոր կլինի փոխհատուցել առաջացած վնասները:

Նմանատիպ միջոցառումներ մշակելու նպատակով հարկավոր է անդրադառնալ այդ ոլորտում ձևավորված փորձ ունեցող երկրներին: Երկրների առաջատար տասնյակը ուսումնասիրելով՝ կտեսնենք, որ թե՛ տարեկան գրանցված երկրաշարժերի քանակով, թե՛ ձեռնարկված միջոցառումների բազմազանությամբ աչքի է ընկնում Ճապոնիան:⁴ Տարեկան կտրվածով Ճապոնիայում տեղի է ունենում մոտ 1500 երկրաշարժ:⁵ Իսկ երկրաշարժերի հետևանքով պատճառված վնասը նվազեցնելու գործընթացում ներգրավված են ինչպես ապահովագրական ընկերությունները, այնպես էլ՝ պետական մարմինները:

ՀՀ-ում երկրաշարժի հետևանքով առաջացած վնասի փոխհատուցման համակարգի ներդրման հետ կապված միջոցառումներ մշակելու նպատակով ուսումնասիրենք Ճապոնիայում գործող համակարգը և բացահայտենք ՀՀ-ում առկա հիմնախնդիրները: Ուշագրավ է, որ ՀՀ-ում թարգմանվել և կիրառվում է Ճապոնիայի Սենդայ քաղաքում մշակված

⁴ *The World's Most Earthquake-Prone Areas and Countries*, <https://quantectum.com/blog/the-world%E2%80%99s-most-earthquake-prone-areas-and-countries/>; *10 earthquake Prone Countries in the World*, <https://www.skymetweather.com/content/earth-and-nature/10-earthquake-prone-countries-in-the-world/>

⁵ *Japan Rail Pass*, <https://www.jrailpass.com/blog/earthquakes-in-japan#:~:text=Japanese%20Archipelago%20and%20Seismic%20Activity,-The%20islands%20of&text=The%20country%20is%20also%20home,back%20over%20a%20thousand%20years>

«Ադետների ռիսկի նվազեցման Մենդայի 2015-2030թթ. գործողությունների ծրագիրը»:⁶

Հիմնախնդիրների բացահայտումը կատարենք ինչպես իրավական, այնպես էլ տնտեսական տեսանկյուններից:

ՀՀ-ում երկրաշարժերի հետևանքով պատճառված վնասների նվազեցման համակարգի կատարելագործմանն առնչվող հիմնախնդիրներից կարող ենք առանձնացնել հետևյալները՝

1. Եթե համեմատենք ՀՀ-ի և Ճապոնիայի երկրաշարժերի ապահովագրության և շինությունների կառուցմանն առնչվող իրավական համակարգերը, կնկատենք, որ Ճապոնիայում վերջինս անհամեմատ զարգացած է: Ճապոնիայում մշակված են բազմաթիվ օրենսգրքեր և ստանդարտներ, որոնք վերաբերում են ոչ միայն ապահովագրական համակարգին և վնասի փոխհատուցմանը, այլև շենքերի կառուցման պահանջներին: Ընդ որում, ոչ թե պարզապես սահմանված է, թե շինությունը քանի բալ երկրաշարժի պետք է դիմակայի, այլ ինչպես այն պետք է կառուցվի հիմքից:

2. ՀՀ-ում միակ գլուխը, որը Քաղաքացիական օրենսգրքի մակարդակով կարգավորում է վնասների հատուցումը, 60-րդն է, որը նվիրված է վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններին: Սակայն, 1058-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման **այն պատճառած անձի կողմից**:⁷ Հոդվածի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում

⁶ *Ադետների ռիսկի նվազեցման Մենդայի 2015-2030 թթ. գործողությունների ծրագիր*, 38 էջ, <http://www.mes.am/hy/arn-senda>

⁷ *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*, 1998:

աղետների հետևանքով անձի կյանքին կամ գույքին պատճառված վնասների իրավական կարգավորումը բացակայում է:


3. ՀՀ-ում ոչ միայն ձևավորված չէ երկրաշարժի հետևանքով վնասի հատուցման իրավական համակարգը, այլ նաև չկա երկրաշարժերի ապահովագրության զարգացած համակարգ: Բացի այդ, ի տարբերություն Ճապոնիայի, նախատեսված չէ պետության մասնակցությունը վնասի նվազեցման գործընթացում:

Բնական է՝ որպեսզի ՀՀ-ում երկրաշարժերի հետևանքով պատճառված վնասի ապահովագրության համակարգը գործի և հնարավոր լինի տեղայնացնել Ճապոնիայի փորձը, հարկավոր է սկսել շինությունների կառուցմանը ներկայացվող պահանջներից:

✓ **Ինչպե՞ս է գործում Շինությունների կառուցման ստանդարտը Ճապոնիայում և ի՞նչ պահանջներ են ներկայացվում կառուցվող շինություններին:**

Վերլուծությունը կատարելու համար ուսումնասիրենք Ճապոնիայի շինարարության ստանդարտների օրենսգիրքը: Շինությունների չափերը և հնարավոր վտանգի առկայությունը ներկայացված են Գծապատկեր 1.-ում:

Գծապատկեր 1



Աղբյուր՝ Yuji Ishiyama, Dr. Eng., *Earthquake Damage and Seismic Code for Buildings in Japan*, p. 3, http://ares.tu.chiba-u.jp/peru/pdf/meeting/120817/M6_Ishiyama.pdf

Գծապատկեր 1. Շինությունների կառուցման պահանջների ճանապարհային քարտեզը Ճապոնիայում⁸

Համաձայն Գծապատկեր 1.-ի՝ Ճապոնիայում յուրաքանչ-յուր շինություն պետք է կառուցվի՝ հաշվի առնելով a-j պահանջները,⁹ իսկ յուրաքանչյուր մասշտաբի շինության համար գործում է յուրահատուկ քարտեզ:

Մասնավորապես՝ Քարտեզ 0-ն չի պահանջում կառուցվածքային հաշվարկի իրականացում: Սեյսմիկ անվտանգությունն իրականացվում է (a) կառուցվածքային բնութագրերով: Այս քարտեզը կիրառվում է փոքր մասշտաբի շենքերի համար:

Քարտեզ 1-ը պահանջում է (b) թույլատրելի սթրեսի հաշվարկ, ինչպես նաև (c) բարձրության, ամրության և որոշ սահմանափակումների կիրառում: Սեյսմիկ անվտանգությունն իրականացվում է (a) կառուցվածքային բնութագրերի լրացմամբ: Այս քարտեզը կիրառվում է փոքր և միջին մասշտաբի շենքերի համար:

Քարտեզ 2-ը պահանջում է (a) թույլատրելի սթրեսի հաշվարկ, ինչպես նաև (d) պատմական շեղման, (f) կոշտության, (e) ամրության և ճկունության սահմանափակումների կիրառում: Սեյսմիկ անվտանգությունն իրականացվում է (a) կառուցվածքային բնութագրերի լրացմամբ: Այս քարտեզը կիրառվում է 31 մետրը չգերազանցող շենքերի համար:

⁸ Ishiyama Y., Dr. Eng., *Earthquake Damage and Seismic Code for Buildings in Japan*, p. 3, http://ares.tu.chiba-u.jp/peru/pdf/meeting/120817/M6_Ishiyama.pdf

⁹ Պահանջները առավել մանրամասն ներկայացված են 9-րդ հոլման մեջ ներկայացված հոդվածում: Տե՛ս Ishiyama Y., Dr. Eng., *Earthquake Damage and Seismic Code for Buildings in Japan*, opt. cit., pp. 3-4.

Քարտեզ 3-ը պահանջում է (b) թույլատրելի սթրեսի, (d) պատմական շեղման և (j) ամբողջական կողային հզորության հաշվարկ: Մեյսմիկ անվտանգության պահանջների պահպանումն իրականացվում է (a) կառուցվածքային բնութագրերի լրացմամբ: Այս քարտեզը կիրառվում է այն շենքերի համար, որոնց բարձրությունը չի գերազանցում 60 մ-ը:

Քարտեզ 4-ը պահանջում է ստուգումների իրականացում (h) վնասի, (i) անվտանգության և (d) պատմական շեղման սահմանաչափերի կիրառման համար: Մեյսմիկ անվտանգությունն իրականացվում է (a) կառուցվածքային բնութագրերի լրացմամբ, որոնք, բացառությամբ ամրության, կարող են մեղմվել: Այս քարտեզը կիրառվում է այն շենքերի համար, որոնց բարձրությունը չի գերազանցում 60 մ-ը:

Քարտեզ 5-ը պահանջում է (j) ժամանակային վերլուծությունների իրականացում սեյսմիկ անվտանգությունը ստուգելու համար, իսկ (a) կառուցվածքային բնութագրերը կարող են մեղմվել: Այս քարտեզը կիրառվում է բոլոր շենքերի համար, ներառյալ այն շենքերի, որոնց բարձրությունը գերազանցում է 60 մ-ը:

Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա նոր բազմահարկ շենքերը, որոնք կառուցվել են 1994 թ. հետո, նախագծվել են 9 բալ և բարձր սեյսմակայունության հաշվարկով: Եթե այդ շենքերը նախագծվել, փորձաքննություն են անցել և կառուցվել առանց շեղումների, ապա պետք է ընդունել, որ դրանք սեյսմակայուն են: Սակայն ԽՍՀՄ տարիներին կառուցված շենքերը, որոնք առկա շենքերի մոտ 70 տոկոսն են, նախագծվել են 7-8 բալ սեյսմակայունության հաշվարկով, շահագործման ընթացքում չեն ամրացվել, և հնարավոր է՝ չդիմակայեն 9 բալ և բարձր

ուժգնության երկրաշարժին:¹⁰ Օրենսդրության տեսանկյունից, ՀՀ-ում գործող թիվ 11714203 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014թ.-ի հրամանում ¹¹ շենքերի կառուցման մանրամասն պահանջներ ներկայացված չեն:

Նման դեպքում շինությունների երկրաշարժից ապահովագրության համակարգի ներդրման համար հիմնախնդիր է առաջանում, քանի որ ապահովագրավճարի և սակագնի ստույգ չափի հաշվարկման համար շինությունների սեյսմոկայունության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

- ✓ **Ինչ մասնակցություն ունեն Ճապոնիայի պետական մարմինները երկրաշարժերից առաջացած վնասի նվազեցման և/կամ փոխհատուցման գործընթացում**

Ճապոնիայում երկրաշարժերից առաջացած վնասի նվազեցման և փոխհատուցման գործընթացում մեծ դերակատարում ունի Ճապոնիայի Կառավարությունը: Այն վերաապահովագրում է այն ռիսկերը, որոնք իրենց վրա են ստանձնել ռիսկը ապահովագրած ապահովագրական ընկերությունները:

¹⁰ Հայաստանում տարեկան տեղի է ունենում միջին հաշվով 300-500 երկրաշարժ, որն է պատճառը, ԱԻ նախարարի հարցազրույցը՝ ՀԺ-ին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Նորություններ, Պաշտոնական, 17.02.2021, <http://mes.am/hy/news/item/2021/02/17/2300/>

¹¹ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հրաման, 31.03.2014, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=75764>

Ռիսկերի վերաապահովագրությունն իրականացվում է հետևյալ կերպ՝¹²

- Վերաապահովագրական հատուցումները վճարվում են ոչ թե բոլոր, այլ միայն խոշոր երկրաշարժեր տեղի ունենալու դեպքում:
- Վերաապահովագրական հատուցման ամբողջ գումարը որոշվում է Ճապոնիայի Ազգային ժողովի կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար:
- Վերաապահովագրական հատուցման սահմանաչափը կազմում է 11.7751 տրիլիոն իեն, կամ 82.1 մլրդ դոլար, կամ 2022 թ.-ի Ճապոնիայի պետական բյուջեի եկամուտների 10.6%-ը:¹³ Վերաապահովագրավճարները հավաքվում են **Երկրաշարժերի վերաապահովագրության հատուկ հաշվին**: Վերաապահովագրական հատուցումները վճարվում են մասնավոր ապահովագրական ընկերություններին այն դեպքում, երբ տեղի է ունենում խոշոր երկրաշարժ:
- Վերաապահովագրական հատուցման գումարը որոշվում է՝ հիմք ընդունելով **Կանտոյի ավերիչ երկրաշարժի** արդյունքում կրած վնասի մեծությունը: Ճապոնիայում տեղի ունեցած Հանշին Ավաջիի և Մեծ արևելյան երկրաշարժերի (Ֆուկուշիմա) վնասների

¹² Ճապոնիայի ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջ, https://www.mof.go.jp/english/policy/financial_system/earthquake_insurance/outline_of_earthquake_insurance.html#02

¹³ *Highlights of the FY2022 Draft Budget*, p. 2, <https://www.mof.go.jp/english/policy/budget/budget/fy2022/01.pdf>

մեծությունները չեն գերազանցել նշված սահմանաչափը:

- Այն դեպքում, երբ առաջացած վնասի մեծությունը գերազանցի նշված սահմանաչափը, Կառավարությունը կգործադրի բոլոր հնարավոր ջանքերը հավելյալ վնասը փոխհատուցելու համար:

Համեմատելով վերը ներկայացված համակարգը Հայաստանի Հանրապետության համակարգի հետ՝ կտեսնենք, որ Հայաստանի Հանրապետությունում Կառավարությունը նման ռիսկերի վերաապահովագրության գործընթացում մասնակցություն չունի: Ստացվում է, որ վնասների փոխհատուցման պետական համակարգ ՀՀ-ում չի գործում, իսկ ապահովագրական հատուցումների վճարման ամբողջ բեռը դրվում է ապահովագրական ընկերությունների վրա: Եթե հետևենք Ճապոնիայի օրինակին, ապա որպես խոշոր երկրաշարժ պետք է սահմանել Սպիտակի ավերիչ երկրաշարժը, իսկ վերաապահովագրավճարի չափը՝ հավասարազոր Սպիտակի երկրաշարժի արդյունքում կրած վնասի չափին: Սպիտակի երկրաշարժի արդյունքում միայն ուղիղ նյութական կորուստների թիվը կազմել է 14 մլդ ԱՄՆ դոլար՝ չհաշված մարդկային կորուստների և այլ ձեռնարկությունների ու օբյեկտների փլուզման արդյունքում կրած վնասները:¹⁴ Միայն ուղղակի նյութական վնասների մեծությունը գերազանցում է ՀՀ 2022 թ. պետական բյուջեի եկամուտների մեծությունը մոտ 3.5 ան-

¹⁴ *Սպիտակի 1988 թ. երկրաշարժը լուսանկարներով, փաստերով և մեկնաբանություններով*: Հայերեն-անգլերեն / Ս.Ն. Նազարեթյան, նշվ. աշխ., էջ 8, <http://www.mes.am/files/docs/3199.pdf>

գամ:¹⁵ Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ վերաապահովագրական եկամուտները պետական բյուջեում կընդգրկվեն որպես եկամուտներ՝ հասցնելով բյուջեի մեծությունը մոտ 19 մլրդ ԱՄՆ դոլարի: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ գումարը հնարավոր կլինի հավաքել միայն այն դեպքում, եթե երկրաշարժերից ապահովագրությունը սահմանվի որպես պարտադիր ապահովագրության տարատեսակ: Եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր բնակչության թվաքանակը կազմում է մոտ 2.2 մլն մարդ,¹⁶ ապա միջինում յուրաքանչյուր անձ պետք է վճարի 2.5 մլն դրամ կամ 5.800 ԱՄՆ դոլար վնասների փոխհատուցումն ապահովելու համար: Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ Ճապոնիայում յուրաքանչյուր անձ միջինում պետք է վճարի 95.000 իեն (720 դոլար), որը համարժեք է 303 հազար դրամի: Եթե հիմք ընդունենք, որ Ճապոնիայում միջին աշխատավարձը կազմում է 515,000 իեն,¹⁷ ապա յուրաքանչյուր անձ պետք է իր տարեկան աշխատավարձի մոտ 1.8%-ն ուղղի ապահովագրությանը: Դա էլ այն դեպքում, եթե Կառավարությունը նպատակադրվի գումարը հավաքել ամբողջությամբ մեկ տարվա ընթացքում: Եթե այդ նույն տոկոսային հարաբերակցությունը կիրառենք ՀՀ-ի բնակչության աշխատավարձերի նկատմամբ, կստացվի, որ յուրաքանչյուր անձ պետք է վճարի 47.500 ՀՀ դրամ

¹⁵ ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական բյուջե, 2022թ., https://minfin.am/hy/page/petakan_byuj/

¹⁶ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022թ., <https://www.armstat.am/am/?nid=586-&year=2021>

¹⁷ *Average Salary in Japan*, <https://biz30.timedocor.com/average-salary-in-japan/>

տարեկան կտրվածքով: Այսինքն՝ ընդամենը կհավաքվի մոտ 105 մլրդ ՀՀ դրամ կամ 251 մլն ԱՄՆ դոլար (ըստ 2022 թ. օգոստոսի փոխարժեքի): Արդյունքում ստացվում է, որ մնացած 13.749 մլրդ դոլարի ֆինանսավորման համար հարկավոր է փնտրել այլ աղբյուրներ:

- ✓ **Ինչպիսի իրավական ակտեր են գործում Ճապոնիայում երկրաշարժերից ապահովագրությունը իրականացնելու համար:**

Հիմնական իրավական ակտը 1966 թ. ընդունված **Երկրաշարժերից ապահովագրության ակտն** է:¹⁸ Ակտի նպատակն է նպաստել երկրաշարժից ապահովագրության ներդրմանը՝ պարտադրելով կառավարությանը վերաապահովագրել ապահովագրական ընկերությունների սեյսմիկ պարտավորությունները՝ դրանով իսկ նպաստելով երկրաշարժից տուժածների կյանքի կայունության ապահովմանը: Ակտում նշված է, որ վնասը, որն առաջացել է հրդեհի, ավերածության կամ ջրհեղեղի հետևանքով և ուղղակի կամ անուղղակի պատճառվել է երկրաշարժի կամ հրաբխի ժայթքման կամ ցունամիի հետևանքով հատուցվում է Կառավարության որոշմամբ սահմանված չափով:¹⁹

Ինչպես եզրակացնում ենք ակտի ուսումնասիրությունից, Ճապոնիայում երկրաշարժերից ապահովագրության համակարգը թեն իրականացվում է մասնավոր ապահովագրական

¹⁸ *Act on Earthquake Insurance*, Act No. 73 of May 18, 1966, <https://www.japaneselawtranslation.go.jp/en/laws/view/3875/en>

¹⁹ Ibid.

ընկերությունների կողմից, սակայն ապահովագրական գումարի, ապահովագրական հատուցման չափի, պատճառված վնասի գնահատման և մի շարք այլ պահանջներ սահմանվում են Ճապոնիայի կառավարության կողմից: ՀՀ-ում նմանատիպ ակտով իրավահարաբերությունները կարգավորված չեն:

✓ **Ինչ սկզբունքներով է կնքվում երկրաշարժերից ապահովագրության պայմանագիրը Ճապոնիայում:**

Ճապոնիայում երկրաշարժերից ապահովագրության համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն հրդեհից ապահովագրության պայմանագրի բաղկացուցիչն է: Երկրաշարժից ապահովագրություն իրականացնելու համար նախապայման է հրդեհից ապահովագրության պայմանագրի կնքումը:²⁰ Հրդեհից ապահովագրության ապահովադիրները կարող են պայմանագրի գործողության ընթացքում կնքել երկրաշարժից ապահովագրության պայմանագիր: Ընդ որում, երկրաշարժից ապահովագրությունը ծածկում է բացառապես երկրաշարժի արդյունքում պատճառված վնասները և ծածկում է միայն բնակելի նշանակության շենքերը և անձնական գույքը: Հրդեհից ապահովագրությունը չի փոխհատուցում երկրաշարժի հետևանքով առաջացած հրդեհի կամ երկրաշարժի հետևանքով տարածված հրդեհի արդյունքում առաջացած վնասը:

²⁰ *Outline of Japan's Earthquake Insurance System*, https://www.mof.go.jp/english/policy/financial_system/earthquake_insurance/outline_of_earthquake_insurance.html

- ✓ **Ինչպես է հաշվարկվում երկրաշարժերից ապահովագրության սակագինը և ապահովագրավճարը ճապոնիայում:**

Երկրաշարժերից ապահովագրության դրույքաչափը հաշվարկվում է **Ճապոնիայի ընդհանուր ապահովագրության վարկանիշային կազմակերպությունը**, որը հիմնված է «Ընդհանուր ապահովագրության վարկանիշային կազմակերպության» օրենքի վրա: Ապահովագրավճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա՝

**Ապահովագրավճարը=Ռիսկային
դրույքաչափ+Բեռնվածություն**

Երկրաշարժերի հետազոտման խթանման կենտրոնական գրասենյակը (Headquarters for Earthquake Research Promotion), որը կառավարությանը կից կազմակերպություն է, հրապարակել է **Հավանական սեյսմիկ վտանգի քարտեզները**:²¹ Ռիսկային դրույքաչափը հաշվարկվում է վնասների նախագծման վերջին վերանայված մեթոդի հիման վրա՝ ծածկելու բոլոր այն երկրաշարժերը, որոնք ընդգրկվում են քարտեզների կազմման ժամանակ և ենթադրվում է, որ ապագայում դրանք կարող են վնաս պատճառել:

Փաստացի ապահովագրավճարը հաշվարկվում է՝ ապահովագրավճարի հիմնական դրույքաչափը (որը սահմանված է ըստ բնակելի շենքի կառուցվածքի և բնակելի շենքի՝ ապահո-

²¹ 全国地震動予測地図2020年版の概要, 地震調査研究推進本部 事務局, 2021年3月, pp. 1-12, https://www.jishin.go.jp/main/chousa/20_yosokuchizu/-yosokuchizu2020_gaiyo2.pdf

վագրության ենթակա անձնական գույքի և շենքի գտնվելու վայրի) բազմապատկելով ըստ սեյսմակայունության համար սահմանված գեղչի դրույքաչափով (դրա հաշվարկման համար պահանջվում են որոշակի հաստատող փաստաթղթեր):²²

Բազային ապահովագրավճարը սահմանված է օրենսդրորեն: Այն տարբերվում է հաշվի առնելով շինության տեսակը և կանգնվելու վայրը: Գոտիները երեքն են: Ամենաբարձր բազային ապահովագրավճարները սահմանված են Տոկիոյի, Կանադավայի, Չիբայի և Շիգուոկայի համար:

Զեղչային դրույքաչափերը չորսն են և դրանց մեծությունները կախված են շինության սեյսմոդիմակայունությունից: Դրանք հետևյալն են՝

1. Սեյսմոմեկուսացված շինությունների համար-50%,
2. Երկրաշարժին դիմակայող շինությունների համար՝
 - Առաջին դաս-10%²³,
 - Երկրորդ դաս-30%²⁴,
 - Երրորդ դաս-50%²⁵,
3. Երկրաշարժին դիմակայելու համապատասխանություն անցած շինությունների համար-10%,

²² Japan Earthquake Reinsurance Co., Earthquake Insurance in Japan, Ltd. Annual Report, 2021, pp. 3-4.

²³ Առաջին դասի շինությունների համար ենթադրվում է, որ դրանք չեն փլուզվի շատ հազվադեպ տեղի ունեցող երկրաշարժերից

²⁴ Երկրորդ դասի շինությունների համար ենթադրվում է, որ դրանք չեն փլուզվի շատ հազվադեպ տեղի ունեցող երկրաշարժերի հզորությունը 1.25 անգամ գերազանցող երկրաշարժերից

²⁵ Երկրորդ դասի շինությունների համար ենթադրվում է, որ դրանք չեն փլուզվի շատ հազվադեպ տեղի ունեցող երկրաշարժերի հզորությունը 1.5 անգամ գերազանցող երկրաշարժերից, որոնք տեղի են ունենում մի քանի հարյուր տարին մեկ անգամ

4. Այն շինությունները, որոնք կառուցվել են 1981թ. կամ հետո-10%:

Ապահովագրական պայմանագրերը կարող են կնքվել կարճաժամկետ (մինչև 1 տարի) կամ երկարաժամկետ (1 տարուց ավել, մինչև 5 տարի) ժամանակահատվածի համար: Եթե պայմանագիրը կնքվել է երկարաժամկետ ժամանակահատվածի համար, ապա ապահովագրավճարների հաշվարկման համար կիրառվում են համապատասխան գործակիցներ (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ապահովագրավճարների գործակիցները երկարաժամկետ պայմանագրերի համար

Պայմանագրի գործողության ժամկետ	2 տարի	3 տարի	4 տարի	5 տարի
Գործակից	1.90	2.85	3.75	4.65

Աղբյուրը՝ Japan Earthquake Reinsurance Co., Earthquake insurance in Japan, Ltd. Annual Report, 2021, 8pg., p. 5.

Ապահովագրավճարի հաշվարկման տրամաբանությունը հասկանալու համար ներկայացնենք հետևյալ օրինակը՝

Ենթադրենք՝ Սայտամա կենում 2000թ.-ից հետո կառուցվել է ոչ փայտյա շինություն, որի ապահովագրական գումարը կազմել է շինության համար 20 մլն իեն, անձնական գույքի համար՝ 10 մլն իեն: Ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետը 1 տարի է:

Առաջնահերթ հարկավոր է որոշել երկրաշարժից ապահովագրության մասնաբաժինը ընդհանուր պայմանագրում:²⁶ Սովորաբար այն կազմում է ընդհանուր պայմանագրում նշված ապահովագրական գումարի 30-50%: Եթե ենթադրենք, որ երկրաշարժից ապահովագրության մասնաբաժինը կազմում է հրդեհից ապահովագրության պայմանագրի 50%-ը, ապա շինության ապահովագրական գումարը կկազմի $20 \text{ մլն} \times 50\% = 10 \text{ մլն}$ իեն, իսկ անձնական գույքի ապահովագրական գումարը՝ $10 \text{ մլն} \times 50\% = 5 \text{ մլն}$ իեն:

Քանի որ շինությունը փայտյա չէ և կառուցված է Սայտամա կենում, ապա, հիմք ընդունելով Ճապոնիայի վերապահովագրական ընկերության պահանջները, ապահովագրավճարի գործակիցը կկազմի 2.04: Քանի որ շինությունը կառուցված է 1981թ.-ից հետո, ապա զեղչային դրույքաչափը կկազմի 10%:

Հետևաբար՝

Շինության ապահովագրավճարը $= 10,000 \times 2.04 \times (100\% - 10\%) = 18,400$ իեն

Անձնական գույքի ապահովագրավճարը $= 5,000 \times 2.04 \times (100\% - 10\%) = 9,200$ իեն

ՀՀ-ում երկրաշարժը՝ որպես ռիսկի տարատեսակ պարզապես ընդգրկված է հրդեհից ապահովագրության պայմանագրում, սակայն առանձին ապահովագրավճար ռիսկի այս տեսակի համար չի հաշվարկվում. այն հաշվարկվում է ընդհանուր հրդեհից ապահովագրության պայմանագրի համար:

²⁶ Երկրաշարժից ապահովագրությունը հրդեհից ապահովագրության պայմանագրի բաղկացուցիչն է:

Ինչպես է կատարվում փոխհատուցումը պատահար տեղի ունենալու դեպքում:

Ճապոնիայի օրենսդրությունը սահմանում է այն **հիմնական բացառությունները**, որոնց արդյունքում պատճառված վնասը չի փոխհատուցվում: Դրանց շարքում առանձնացված են հետևյալ բացառությունները՝

1. Այն կորուստը կամ վնասը, որն առաջացել է դիտավորյալ գործողությունների, կոպիտ անփութության կամ օրենքի խախտման հետևանքով,

2. Ապահովագրական օբյեկտների կորուստ կամ գողություն,

3. Պատերազմի կամ ապստամբության պատճառով առաջացած կորուստ կամ վնաս,

4. Կորուստ կամ վնաս, որը տեղի է ունեցել երկրաշարժից տասն օր հետո կամ ավելի ուշ,

Կորուստ կամ վնաս, որը պատճառվել է միայն դարպասների, պատերին, ցանկապատերին և այն մասերին, որոնք հիմնական կառուցվածքային մասեր չեն համարվում:

Ապահովագրական հատուցումը կատարվում է 12 տրլ իենի շրջանակներում յուրաքանչյուր համար, իսկ եթե պատճառված վնասը գերազանցում է սահմանաչափը, ապա Ճապոնիայի կառավորությունը լիազորված է նվազեցնել յուրաքանչյուր պայմանագրի գծով վճարվելիք ապահովագրական հատուցումը:

Ապահովագրական հատուցումները վճարվում են Ադյուսակ 2.-ում ներկայացված տվյալների համաձայն:

Աղյուսակ 2

Ապահովագրական հատուցումների վճարման կարգը ըստ
վնասի մակարդակի

<i>Բնակելի նշանակության շինություն</i>			<i>Անձնական գույք</i>
<i>Վնասի մակարդակ</i>	<i>Հիմնական կառուցված- քային մասերի կորստի չափը</i>	<i>Այրված կամ հեղեղված հա- տակի տարած- քը (մասնակի կորուստը տեղի է ունե- նում, երբ բնա- կելի շենքը հե- ղեղված է հա- տակից բարձր)</i>	<i>Անձնական գույքի կորստի կամ վնասման մակարդակը</i>
<i>Ամբողջա- կան կորուստ</i>	Բնակելի շենքի ընթացիկ գնի 50%-ը կամ ավելին	Բնակելի շենքի ընդհանուր մակերեսի 70%-ը կամ ավելին	Անձնական գույքի ընթա- ցիկ գնի 80%- ը կամ ավելին
<i>Վնասի մեծ մասնա- բաժին</i>	Բնակելի շենքի ընթացիկ գնի 40%-ից մինչև 50%-ը	Բնակելի շենքի ընդհանուր մակերեսի 50%-ից մինչև 70%-ը	Անձնական գույքի ընթացիկ գնի 60%-ից մինչև 80%-ը
<i>Վնասի փոքր մասնա- բաժին</i>	Բնակելի շենքի ընթացիկ գնի 20%-ից մինչև 40%-ը	Բնակելի շենքի ընդհանուր մակերեսի 20%-ից մինչև 50%-ը	Անձնական գույքի ընթացիկ գնի 30%-ից մինչև 60%-ը

<i>Մասնակի կորուստ</i>	Բնակելի շենքի ընթացիկ գնի 3%-ից մինչև 20%-ը	Բնակելի շենքը վնասվել է, բայց վնասը այնքան չէ, որքան ընդհանուր, մեծ մասնաբաժինը, փոքր մասնաբաժինը կամ մասնակի կորուստը, թեև այն հեղեղվել է հատակից բարձր կամ գետնի մակարդակից 45 սմ բարձրության վրա:	Անձնական գույքի ընթացիկ գնի 10%-ից մինչև 30%-ը
------------------------	---	--	--

Աղբյուր՝ Japan Earthquake Reinsurance Co., Earthquake Insurance in Japan, Ltd. Annual Report, 2021, p. 6.

Ուսումնասիրելով ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող հրդեհից ապահովագրության պրոդուկտները՝ կտեսնենք, որ վնասի հատուցման բաժնում նման մանրամասնությամբ ապահովագրական հատուցման վճարման կարգի պայմաններ նախատեսված չեն, ինչը բավականին կարող է բարդացնել հատուցման վճարման գործընթացը:

Այսպիսով, ընդհանրացնելով Ճապոնիայի և Հայաստանի երկրաշարժերից ապահովագրության համակարգերը, կարող ենք թվարկել ՀՀ-ում ապահովագրության այդ տարատեսակի կատարելագործման հետևյալ հիմնախնդիրները և կատարել մի շարք առաջարկություններ՝

1. ՀՀ-ում երկրաշարժերից ապահովագրության համակարգի հետ կապված իրավական դաշտի կատարելագործում: Մասնավորապես՝ Երկրաշարժերի ապահովագրության օրենքի, Շինությունների կառուցման միասնական ստանդարտի, ինչպես նաև Սթրենս սցենարների ճանապարհային քարտեզի ներդրում: Դա, նախևառաջ, թույլ կտա ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում շինությունները ոչ թե ենթարկել փորձաքննության, այլ ունենալ միասնական բազա շինությունների սեյսմակտիվության վերաբերյալ, և երկրորդ, թույլ կտա ճիշտ հաշվարկել ապահովագրական սակագինը և ապահովագրավճարը:

2. Քանի որ երկրաշարժերը հաճախ կարող են պատճառել մեծ ավերածություններ, ապա միայն ապահովագրական ընկերությունների ներուժը կարող է չբավականացնել ապահովագրական փոխհատուցումը տրամադրելու գործընթացում: Քանի որ երկրաշարժերի արդյունքում պատճառված վնասը մեծ ազդեցություն կարող է թողնել պետության ռազմավարության և բնակչության սոցիալական զարգացման վրա, ապա տրամաբանական է, որ նման ռիսկերի ապահովագրության մեջ իրենց մասնաբաժինն ունենան նաև պետական մարմինները, մասնավորապես ՀՀ Կառավարությունը: Դա թույլ կտա պետական բյուջեի եկամուտների բաժնում նախատեսել հատուկ հոդված՝ Եկամուտներ երկրաշարժերի ռիս-

կերի վերաապահովագրությունից: Դա միաժամանակ կավելացնի պետական բյուջեի եկամուտները, մյուս կողմից հնարավորություն կընձեռի նվազեցնել հնարավոր երկրաշարժերից պատճառված վնասը:

3. Առանձին հաշվարկել երկրաշարժերից ապահովագրության ապահովագրավճարը: Ներկայումս ՀՀ-ում հրդեհից ապահովագրության պայմանագրերի կնքման ժամանակ հաշվարկվում է մեկ միասնական ապահովագրավճար: Դա թույլ չի տա ճիշտ գնահատել երկրաշարժերի արդյունքում պատճառված վնասի մեծությունը: Եթե ՀՀ-ն կիրառի Ճապոնիայի փորձը, ապա ապահովագրավճարի հաշվարկը ռիսկի այդ տեսակի համար ավելի ստույգ կլինի, քանի որ ապահովագրավճարի հաշվարկը հենված կլինի պայմանագրի գործողության ժամկետի, շինության տեսակի և սեյսմոդիմակայության վրա:

ՀՀ-ում երկրաշարժերից ապահովագրության դեպքում պատահար տեղի ունենալիս ապահովագրական հատուցումը վճարվում է հրդեհից ապահովագրության պայմանագրի տրամաբանությամբ, այսինքն՝ ռիսկի այս տեսակի համար առանձնահատկություններ սահմանված չեն: Մինչդեռ, Ճապոնիայում ապահովագրական հատուցման հիմքում ընկած են ապահովագրական օբյեկտի տեսակը և օբյեկտի վնասման մակարդակը: ՀՀ-ում նման մոտեցման ներդրումը հնարավոր կլինի միայն Շինությունների միասնական ստանդարտի ներդրման պարագայում:

GAYANE HARUTYUNYAN, Ph.D.
Armenian State University of Economics,
Associate Professor
E-mail: g.harutyunyan7@gmail.com

**THE FUNDAMENTALS OF IMPROVING THE
EARTHQUAKE INSURANCE SYSTEM IN THE REPUBLIC
OF ARMENIA
(BY THE EXAMPLE OF JAPAN)**

SUMMARY

Keywords: earthquake, insurance, risks, deduction, compensation, legal system, reinsurance, policy.

For the normal functioning of each society, it is necessary to develop a proper policy and strategy that will allow both timely prevention of losses that have occurred and compensation of them. Among such damages, one can distinguish damages caused by natural disasters (earthquake, flood, hurricane, landslide, etc.).

Risk insurance, in which the State has its share, is considered to be one of the effective mechanisms for compensation of losses. From the point of view of implementing an effective system, it is important to study the systems of countries with experience in this area. The article presents the features of the earthquake insurance system in Japan, compared with a similar system operating in Armenia. As a result, a number of suggestions were made.